ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 28 ապրիլի 2022թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 15-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Կարեն Հայրապետյանը, Գագիկ Յայլոյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Աննա Աջամյանը, Սամվել Սիմոնյանը, Նունե Էհտիբարյանը, Զալիկո Համբարյանը, Վարդուհի Թումանյանը, Արամայիս Փիլոյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 12 անդամներ՝ Մարտին Հաջյանը, Կարեն Սարգսյանը, Կարինե Դիլաքյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Սարիբեկ Ամիրյանը, Վահե Ղազարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Արկադի Ասատրյանը, Մանուշ Աթյանը, Սասուն Ասատրյանը: /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Ապրեսյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Զոբանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի արտահերթ նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի 8-րդ հարցի վերաբերյալ հարց ուղղեց ավագանու անդամ Համլետ Մազմանյանը:

Հարց-«ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին ուղղակի վաճառքով հողամաս օտարելուն համաձայնություն տալու և ուղղակի վաճառքի գին սահմանելու մասին» հարցը արդյոք հրատապ հարց է, և հնարավոր կլինի հասկանալ, թե խոսքը ինչ հողամասի մասին է:

Բարձրացված հարցին պատասխանեց աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Զոբանյանը:

Պատասխան-Խոսքը վերաբերվում է Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 77, թիվ 90, թիվ 12, թիվ 58, թիվ 65, թիվ 95, թիվ 68 հասցեներում գտնվող ՝ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասերին կից Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերին, որոնք 60%-ով պարփակված են սեփականության պատկանող հողամասի մեջ: Այն հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, միայն ընդլայման նպատակով, ուղղակի վաճառքով կարող է տրվել շրջապատող սեփականատիրոջը, որի սեփականատեր հանդիսանում է «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ն:

Օրակարգի հարցերի վերաբերյալ այլ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1) Սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին

(Զեկուցող՝ Ա. Մաթոսյան)

2) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

3) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Վ. Ապրեսյան)

6) «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը,

պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 62-Ա որոշման թիվ 8 հավելվածը ուժը կորցրած ճանաչելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 8-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան)

8) «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին ուղղակի վաճառքով հողամաս օտարելուն համաձայնություն տալու և ուղղակի վաճառքի գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին սեղմված բնական գազ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

(Զեկուցող՝ Վ. Ապրեսյան)

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԼՍԵՑԻՆ «ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ)

Զեկուցողը՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Արտակ Մաթոսյանը մանրամասն ներկայացրեց 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերը՝ ներկայացվել է 7 սուբվենցիոն հայտ, որոնք ընդգրկում են համայնքի 19 բնակավայրերը: Սուբվենցիոն ծրագրեր չեն ներկայացված Սարալանջ, Նոր Խաչակապ բնակավայրերում: Հայտերը ներկայացված են, նախագծերը պատվիրված: Նախնական նախատեսվել է 1 միլիարդ 27 միլիոն դրամ : Բյուջեով համայնքային մասնաբաժինը նախատեսված է 286 միլիոն, մյուս մասը համայնքային մասնաբաժնից վճարելու են ներդրողները:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ մասնակցելու հետևյալ սուբվենցիոն ծրագրերին.

1) «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Էստոնական և Տաշիր թաղամասերի գլխավոր ճանապարհների, Ծաղկաբեր համայնքի 3-րդ փողոցի և Լեռնանցք բնակավայրի «Նոր գյուղ»-ի կենտրոնական ճանապարհի սալարկում տուֆով և ջրահեռացման համակարգի կառուցում»,

2) «Սպիտակ բնակավայրի Այգեստան թաղամասի փողոցի հիմնանորոգում ասֆալտապատումով և ջրահեռացման համակարգով, Շենավան բնակավայրի փողոցների մասնակի ասֆալտապատում, Արևաշող բնակավայրի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգում ասֆալտապատումով, Ծաղկաբեր բնակավայրի 1-ին փողոցի հենապատի կառուցում, Լուսաղբյուր բնակավայրի սելավատարների գաբիոնով կառուցում»,

3) «Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի 4-րդ փողոցի, Լուսաղբյուր բնակավայրի գերեզմանատուն տանող, Լեռնավան բնակավայրի՝ 2-րդ փողոցի, Ջրաշեն բնակավայրի 7-րդ փողոցի, 1-ին փողոց 5-րդ փակուղի և 6-րդ փողոցի, Խնկոյան բնակավայրի գերեզմանատուն տանող փողոցների սալարկում տուֆով և ջրահեռացման համակարգի կառուցում»

4) «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի արցախյան գոյամարտերում անմահացած զավակների հիշատակի հուշահամալիրի կառուցում, Մեծ Պարնի բնակավայրի նոր բնակատեղիի համայնքային այգու կառուցում»,

5) «Սպիտակ համայնքի Սպիտակ, Լեռնանցք, Արջհովիտ, Ջրաշեն, Արևաշող, Շենավան, Գեղասար և Խնկոյան բնակավայրերի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնում»,

6) «Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում խմելու ջրի նոր ջրագծի կառուցում, ներքին ցանցավորում, Քարաձոր բնակավայրի խմելու ջրի ցանցի մասնակի խողովակաշարի վերանորոգում,Գոգարան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում Շիրակամուտ բնակավայրի թիվ 14, 16 փողոցների,Կրասնոդարի փողոցի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում, Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի փոփոխում և ակունքների վերանորոգում»,

7) «Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման ցանցի վերակառուցում, Արջհովիտ բնակավայրի ոռոգման ներքին ջրատարի կառուցում, Շենավան բնակավայրի ոռոգման համակարգի վերանորոգում և ջրամբարի հիմնանորոգում, Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարահարթ բնակավայրի 10-րդ, 15-րդ և 16-րդ փողոցների ոռոգման համակարգի կառուցում, Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Ծաղկաբեր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Լեռնավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Արևաշող բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում»:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Զեկուցողը՝ աշխատակազմի քարտուղար Ա. Ֆրանգյանը ներկայացրեց, որ Կաթնաջուր համայնքում առկա է շենք՝ նախատեսված մանկապարտեզի համար, որը նախկինում գործել է, բայց հիմա ինչ-ինչ պատճառներով չի գործում: Ուսումնասիրվել է, իրականացվել է 0-4 տարեկան երեխաների հաշվառում: Քանի որ բնակավայրում կան համապատասխան տարեթվի երեխաներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու նոր համայնքային ոչ առևտրային կազմակերպություն և հաստատելու կանոնադրություն: Կանոնադրությամբ մանկապարտեզ նախտեսվել է 3-6 տարեկան երեխաների համար, բայց հաշվառվելու են 3-4 տարեկան երեխաները:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ստեղծել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն և հաստատել կանոնադրությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

4. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը ներկայացրեց այն փոփոխությունները, որոնք նախատեսված են կատարել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների կառուցվածքի, քանակի, հաստիքացուցակի, պաշտոնային դրույքաչափերի մեջ մասնավորապես.

Սպիտակ համայնքի ավագանու 2021թ դեկտեմբերի 28-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն տեխնիկական սպասարկման անձնակազմում նախատեսվել էր 10 բանվորի հաստիք յուրաքանչյուր բնակավայրում՝ 0,5 հաստիքային միավորով 20 աշխատակցով համալրելու նպատակով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանվորները իրականացնում են տարբեր գործառույթներ՝ ապահովում են բնակավայրի ջրամատակարարման աշխատանքները, հետևում են բնակավայրի փողոցային լուսավորության և վարչական շենքի ազդարարման համակարգերին, մասնակցում են բնակավայրի սանմաքրման, բնակավայրի կանաչապատ տարածքների պահպանման և բարեկարգման աշխատանքներին, բնակավայրի ճանապարհների բարեկարգման, գրունտապատ ճանապարհների հարթեցման և փոսալցման, ասֆալտապատ և տուֆապատ ճանապարհների վերանորոգման աշխատանքներին: 20-ից պակաս աշխատակից լինելու դեպքում 1 բանվորը սպասարկելու է 2 բնակավայր, ինչը հնարավոր չէ ֆիզիկապես, աշխատաժամանակը հնարավոր չէ բաշխել, ավելանում են լրացուցիչ ծախսեր: Հաշվի առնելով, որ բանվորների աշխատանքը չափազանց կարևոր է, անհրաժեշտություն է առաջացել 0,5 հաստիքային միավորի փոխարեն սահմանել 1 հաստիքային միավոր հետևյալ պաշտոնային դրույքարափերով՝

2000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրեր - 130 000
1000-ից մինչև 2000 բնակիչ ունեցող բնակավայրեր- 120 000
Մինչև 1000 բնակիչ ունեցող բնակավայրեր - 110 000

Համայնքի բյուջեն չծանրաբեռնելու համար հաստիքացուցակով նախատեսված գործավարի հաստիքը կրճատվում է, հաշվի առնելով նաև այն հանգամանքը , որ գործավարի հաստիքով նախատեսված գործառույթները սահմանված են նաև աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերով, և գործավարի հաստիքը թափուր է:

Հաջորդ փոփոխությունը վերաբերվում է ցանցային անդիմինստրատորի հաստիքին, որը իջեցվել էր քաղաքացիական աշխատանք կատարողների մաս, նախատեսվում է բարձրացնել տեխնիկական սպասարկման անձնակազմ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների կառուցվածքը, քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկի և Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 61-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ա որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

5. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ
/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

Զեկուցողը՝ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Ապրեսյանը նշեց, որ «Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն» որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Սպիտակ համայնքի 2022 թվականի վարչական բյուջեով նախատեսված ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ:
Հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մասին «Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 5-Ա» որոշումը, որով նախատեսված տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի մեջ ընդգրկվել են վարչական բնակավայրերում տեխնիկական սպասարկում

իրականացնող բանվորները, այդ իսկ պատճառով «Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն» որոշման մեջ անհրաժեշտություն է առաջացել կատարել վերաբաշխում, որի նպատակն է վարչական բնակավայրերի տեխնիկական սպասարկման աշխատանքները իրականացնող բանվորների աշխատավարձերի վճարումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի «Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 4-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

6. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 8 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Զեկուցողը նշեց, որ Սպիտակ համայնքի ավագանու 14.04.2022թ. թիվ 33-Ա որոշմամբ հաստատվել էր «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որի տրամաբանական շարունակությունը հանդիսանում է կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելը: Տարածքների միավորման արդյունքում թաղամասերում լիազոր ներկայացուցիչների 9 հաստիքային միավորի փոխարեն ստեղծվում է 6 հաստիքային միավոր, ավելանում են 2 հաշվետարի և 4 վարորդի հաստիքներ:

Ավագանու անդամ Հայկ Սիսակյանը առաջարկեց բարձրացնել տնօրենի և տնօրենի տեղակալի պաշտոնային դրույքաչափերը, իսկ ավագանու անդամ Զալիկո Համբարյանը՝ նաև բանվորների պաշտոնային դրույքաչափերը: Որոշվեց հարցը քննարկել հետագա նիստերի ընթացքում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հայաստանի Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի «Սպիտակի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 62-Ա որոշման թիվ 8 հավելվածը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

7. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 12-ի «Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբատար ավտոմեքենան վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 8-Ա որոշման 1-ին կետում նշված «ԶԻԼ 43362 ԿՕ-449-10 (պետհամարանիշ՝ 559 LL 36)» բառերը և թվերը փոխարինել «ԶԻԼ (տիպարը՝ KO 449-10 (ZIL-4333-62)) մակնիշի (հաշվառման համարանիշը՝ 492 CG 61)» բառերով և թվերով:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

8. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 77, թիվ 90,

թիվ 12, թիվ 58, թիվ 65, թիվ 95, թիվ 68 հասցեներում գտնվող՝ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0478-0001 կադաստրային ծածկագրով 1,2 հեկտար մակերեսով, 06-006-0478-0004 կադաստրային ծածկագրով 0,02797 հեկտար մակերեսով, 0-006-0478-0009 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0008 կադաստրային ծածկագրով 0,003798 հեկտար մակերեսով, 06-006-0478-0005 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով, 06-006-0478-0010 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0006 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով հողամասերին կից Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0478-0015 կադաստրային ծածկագրից 0,005595 հեկտար մակերեսով և 0,045539 հեկտար մակերեսով հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ի տնօրեն Սուսաննա Սամվելի Սիսակյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 77, թիվ 90, թիվ 12, թիվ 58, թիվ 65, թիվ 95, թիվ 68 հասցեներում գտնվող՝ «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0478-0001 կադաստրային ծածկագրով 1,2 հեկտար մակերեսով, 06-006-0478-0004 կադաստրային ծածկագրով 0,02797 հեկտար մակերեսով, 0-006-0478-0009 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0008 կադաստրային ծածկագրով 0,003798 հեկտար մակերեսով, 06-006-0478-0005 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով, 06-006-0478-0010 կադաստրային ծածկագրով 0,024 հեկտար մակերեսով, 06-006-0478-0006 կադաստրային ծածկագրով 0,008 հեկտար մակերեսով հողամասերին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող, 06-006-0478-0015 կադաստրային ծածկագրից 0,005595 հեկտար մակերեսով և 0,045539 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն՝ համաձայն հատակագծերի:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 624 346 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

9. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ
/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

Քննարկելով հարցը՝ Սպիտակ համայնքի ավագանին առաջարկեց Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին յուրաքանչյուր ամիս 22 000 ՀՀ դրամ արժեքի չափով սեղմված բնական գազի փոխարեն տրամադրել 25 հազար :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին 2022 թվականի մայիսի 1-ից յուրաքանչյուր ամիս 25 000 ՀՀ դրամ արժեքի չափով սեղմված բնական գազ տրամադրելուն՝ իրենց աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ